Արձանագրություն N 1

2020 թ. օգոստոսի 28-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի առաջին նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1.2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում:
2.2020-2021 ուս. տարվա դասաբաշխման ծանոթացում:
3.2020-2021 ուս. տարվա ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում զեկ. Լ.Գալստյան:
4. Քննարկել անհատական ժամերի հարցը:
5.Պետական ավարտական կարգի փոփոխություն:
6. էլեկտրոնային ուսուցման Google Classroom-ի հարթակում տեղադրվող դասընթացների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2020 - 2021 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման մասին:

Այս տարի ուսումնական պլանում տեղ են գտել հետևյալ կարևոր հարցերը.

- առարկայական ծրագրերի հաստատում,
- ոլորտում ճանաչված մասնագետների մասնակցությամբ, վարպետության դասերի կազմակերպմում,
- ուսանողների և դասախոսների հաճախման կարգապահության հարցեր,
- ամենամսյա դասալսումների անցակացում,
- անհատական ժամերի կատարում,
- ուսումնական ստուդիայի օգտագործման հարցը,
- պրակտիկայի կազմակերպում,
- դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում,
- քննական տոմսերի հաստատում,
- սեսիոն քննությունների նախապատրաստում և ամփոփում,

- պետական քննությունների կազմակերպում և ամփոփմում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել ամբիոնի 2020 - 2021 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2020 - 2021 ուս. տարվա դասաբաշխման մասին:

Լ. Գալստյանը տեղեկացրեց, այս ուսումնական տարում Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության (բակալավր) բաժին ընդունվել են 29-ը, իսկ մագիստրատուրա 2 դիմորդ: Ուսանողների թվով պայմանավորված՝ ամբիոնի ժամաքանակը բաշխվել է դասախոսների միջև հետևյալ կերպ.

1.Գալստյան Լևոն Վազգենի - ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ, 1 դր.,641 ժամ
2.Երիցյան Սերգո Սարգսի - Բ.Գ.Դ. պրոֆեսոր, 1 դր., 704 ժամ
3.Մարկոսյան Դիանա Հովիկի - հ.գ.թ., դասախոս, 0,5 դր., 420 ժամ
4.Ավետիքյան Հակոբ Դանիելի - պրոֆեսորի պ., 1 դր., 703 ժամ
5.Տիտանյան Կարինե Նապոլեոնի - դասախոս, 0,75 դր.,634 ժամ
6.Բաղդասարյան Արթուր Վանիկի - Մ.Գ. Թ. դոցենտ, 0,75 դր., 665 ժամ
7.Ջիրջյան Էլեն Բենիամինի - դասախոս, 0,5 դր., 433 ժամ
8.Քոչարյան Կարինե Գրիգորի - դոցենտի պ., 0,5 դր., 378 ժամ
9.Երզինկյան Աննա Յուրիի - պրոֆեսոր, 0,5 դր., 355 ժամ
10.Վարդազարյան Գայանե Վլադիմիրի - ասիստենտ 0,5 դր., 449 ժամ
11.Օլքինյան Վարուժան Գևորգի - վաստ. լրագրող, դասախոս 0.75 դր., 659 ժամ
12.Ղուկասյան Անահիտ Հրաչյայի - դասախոս, 0,5 դր., 424ժամ
13.Շիրինյան Անահիտ Մկրտչի - ասիստենտ, 0,25 դր., 230 ժամ
14.Առաքելյան Արսեն Ռուբենի - Ա.Գ.Թ. դոցենտ, 0,25 դր., 279 ժամ
15.Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի - Բ.Գ.Թ. դոցենտ, 0,5 դր., 388 ժամ
16.Աբրահամյան Արամ Լևոնի - Ա.Գ.Թ. դասախոս, 0,5 դր., 440 ժամ
17.Նալբանդյան Գնել Վարազդատի - դասախոս, 0,5 դր., 423 ժամ
18.Պողոսյան Գայանե Ռուբենի - դասախոս, 0,25 դր., 269 ժամ
19.Գասպարյան Մովսես Ալբերտի - դասախոս, 0,5 դր., 424 ժամ

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2020 - 2021 ուս. տարվա ընդունելության քննությունների մասին:

Այս տարի համաճարակի պատճառով ընդունելության քննությունների համար կատարվել են փոփոխություններ: Լրագրության մասնագիտության համար դիմորդները հանձնել են երկու քննություն

- Հայոց լեզու և գրականություն
- Ստեղծագործական աշխատանք

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը անհատական ժամերի վերաբերյալ:

Ելնելով մասնագիտության առանձնահատկություններից անհատական ժամերը խիստ կարևոր են և անհրաժեշտ: Այդ ժամերը կազմում են յուրաքանչյուր դասախոսի ծանրաբեռնվածության ծավալուն մասը: Մոտ օրերս կբաժանվեն անհատական մատյանները, որոնք պետք է լրացվեն ժամանակին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ավելի լրջորեն մոտենալ անհատական ժամերի կատարմանը և ժամանակին լրացնել մատյանները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պետական ավարտական կարգի փոփոխության վերաբերյալ:

1. **Ավարտական աշխատանքի բաղադրիչները՝**

- Հեռուստատեսային կամ ռադիոհաղորդում /ակնարկ կամ ռեպորտաժ/ տևողությունը՝ 12 րոպե.
- Ավարտական աշխատանքի գրավոր նկարագիր, ծավալը՝ նվազագույնը 10 էջ: Ներկայացվում է՝
  -թեման, նպատակը, արդիականությունը, խնդիրները, հանրային նշանակությունը, ակնկալվող արդյունքը, հաղորդման պատրաստման մեթոդները /օգտագործված գրականություն, հարցումներ, հարցազրույցներ/, եզրակացություն:

2. Ավարտական աշխատանքի պաշտպանության ընթացակարգը

- Աշխատանքի հեղինակի կողմից ներածական խոսք, 3-ից մինչև 5 րոպե.
- Տեսանյութի ցուցադրում կամ աուդիոնյութի ունկնդրում.
- Քննական հանձնաժողովի հարցեր:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել ավարտական քննության նոր կարգը:

ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտի պաշտոնակատար Լևոն Գալստյանի հաղորդումը 2020-2021 ուս. տարվա էլեկտրոնային ուսուցման Google Classroom-ի հարթակում տեղադրվող դասընթացների, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման վերաբերյալ:

2020-2021 ուս. տարվա ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման Classroom հարթակում դասավանդվող առարկաների էջերը ստեղծվել են ըստ այս ուս.տարվա դասաբաշխման: Հաջորդ շաբաթ կներբեռնվեն առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները՝ բոլոր անհրաժեշտ փոփոխություններով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – պրոֆ. Հ.Ավետիքյանը, դոցենտներ Ա.Մարտիրոսյանը, Կ.Քոչարյանը, ասիստենտ Գ.Վարդազարյանը, դասախոսներ Գ.Նալբանդյանը, Դ.Մարկոսյանը, Ա.Ղուկասյանը, Կ.Տիտանյանը, Վ.Օլքինյանը, Գ. Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել 2020-2021 ուս.տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները և տեղադրել Classroom հարթակում:

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

ՎԱՐԻՉԻ Պ, ԴՈՑԵՆՏԻ Պ., ՝ Լ. Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Բ. ՍԵՐՈԲՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  N 2

2020թ. հոկտեմբերի 2-ին, տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի երկրորդ նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Ուսումնական պրակտիկայի ընթացքի քննարկում:
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:
3.Ամենամսյա դասալսումների գրաֆիկի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

- Պրակտիկայի կազմակերպման, վերահսկման և անցկացման հարցը:
- Դասալսումների մասին

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լևոն Վազգենի Գալստյանի հաղորդումը պրակտիկայի անցկացման վերաբերյալ:

Համաձայն ուսումնական պլանի հեռուստառադիոլրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկան սկսվում է հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ: Պրակտիկայի ղեկավար է նշանակվել ամբիոնի դասախոս Գայանե Պողոսյանը:

Մագիստրատուրայի լրագրության բաժնի 2-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան սկսվում է հոկտեմբերի 20-ից և ավարտվում նոյեմբերի 9-ը: Պրակտիկան անցկացվելու է Կուլտուրայի ֆակուլտետում: Պրակտիկայի ղեկավար է նշանակվել՝ բ.գ.դ., պրոֆեսոր Սերգո Երիցյանը::

Պրակտիկայի ընթացքում ղեկավարները պետք է պարբերաբար հանդիպեն ուսանողների հետ, լինեն հետևողական:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հանձնարարել պրակտիկայի ղեկավարներին հարջորդ նիստին ներկայացնել պրակտիկայի վերաբերյալ աշխատանքային պլան, ելնելով վերոհիշյալ պահանջներից՝

1. Ուսանողներին տեղեկացնել պրակտիկայի բովանդակության ու անցկացման կարգին՝ նրանց տրամադրելով պրակտիկայի

օրագրեր: Ուսանողները պետք է իմանան, որ հանձնարարությունը չկատարելու դեպքում նրանք կորցնում են պրակտիկայի համար սահմանված կրեդիտը:

2. Պրակտիկայի անցկացման վայրերի բնութագիրը:
3. Վերլուծել պրակտիկայի կազմակերպման և անցկացման ընթացքը:
4. Ապահովել պրակտիկային մասնակցած ուսանողների աշխատանքների բնութագրերի առկությունը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ., Լ. Վ. Գալստյանի հաղորդումը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման /նախնական/ և աշխատանքներին ներկայացվող պահանջների սահմանման և հաստատման վերաբերյալ:

Կարևորագույն խնդիր է մեզ համար, որպեսզի ուսանողները աշխատեն ինքնուրույն, և պետք է բացառվի որևէ գրագողություն: Կարծում եմ, որ բակալավրիատի ավարտական աշխատանքը առավելապես պետք է ցույց տա՝ ինչպես է ուսանողը յուրացրել տեսությունը և ինչպես է կարողանում իր տեսական գիտելիքները կիրառել պրակտիկ աշխատանքում: Չէ՞ որ մենք բակալավրիատում պատրաստում ենք պրակտիկ լրագրողներ: Այդ իսկ պատճառով առավել կարևոր է տեսանյութը, որը կներկայացնի ուսանողը:

**Լրագրություն 4-րդ կուրս**

**Ավարտական աշխատանքների թեմաներ**

1. Անի Հարությունյան – Գյուղական միջավայրի կերպավորման և տիպականացման միտումները ԶԼՄ-ներում ( Հայաստանի հեռուստատեսային և համացանցային լրագրության օրինակով)
2. Անի Կիրակոսյան –Ռազմական դրության պահանջները և պատերազմական իրավիճակների լուսաբանման առանձնահատկությունները ՀՀ ԶԼՄ-ներում
3. Ալվարդ Դավթյան- Գովազդի և PR-ի ժամանակակից դրսևորումները Հայաստանի էլեկտրոնային լրատվամիջոցներում
4. Աննա Ղազարյան- Լրագրողական գործունեությունը հայ-ադրբեջանական երկրորդ պատերազմի ընթացքում

5. Աննա Դեինյան- Հետաքննական լրագրության դրսևորումները Հայաստանի ԶԼՄ-ներում
6. Արման Թարվերդյան - Հայկական պարարվեստը հայաստանյան հեռուստաեթերում (ժողովրդական պարերի օրինակով)
7. Սոնա Սարգսյան - Հայաստանի հեռուստալրագրության զարգացման միտումները և ժամանակակից լրագրողական վարքականոնների կիրառումը
8. Վարդուհի Վարդանյան – Երկխոսական ժանրերի զարգացման ժամանակակից միտումները Հայաստանի հեռուստաեթերում (հարցազրույցի, զրույցի, բանավեճի, թոք-շոուի օրինակով)
9. Մերի Թաթոյան - Զբոսաշրջային հաղորդումների առանձնահատկությունները ԶԼՄ-ներում (Հայաստանյան հեռուստատեսային և համացանցային լրագրության օրինակով)
10. Մարիամ Մանուկյան- Ճամփորդական ակնարկը Հայաստանի ժամանակակից հեռուստաեթերում և նրա դրսևորումները
11. Ինեսսա Անդրեասյան - ԶԼՄ-ների գործառույթների կիրառումը Հայաստանի հեռուստաեթերում՝ հասարակական-քաղաքական հաղորդաշարերի օրինակով
12. Գրետա Մնացականյան - Լրագրողական վարքականոնները և հարցազրուցային հաղորդումները Հայաստանի հեռուստաընկերությունների եթերում (հարցազրույցի, զրույցի, ճեպազրույցի, բանավեճի, թոք-շոուի տեսքով)
13. Մայա Չուխաջյան - Զբոսաշրջության թեման Հայաստանի հեռուստաեթերում, համացանցում և դրա ներկայացման առանձնահատկությունները
14. Քնարիկ Մխիթարյան – Կրոնական և հոգևոր հաղորդումները Հայաստանի հեռուստաընկերությունների ժամանակակից եթերում (մշակույթի, ավանդույթների և ծիսակատարությունների մասին հաղորդումների օրինակով)
15. Լիաննա Մելիքսեթյան – Հայաստանի ԶԼՄ-ները և լրագրողական աշխատանքը համաճարակի օրերին:

**Լրագրություն 2-րդ կուրս**

**Մագիստրոսական թեզերի թեմաներ**

1. Լազարյան Սյուզաննա - <<Ավանդական եւ համացանցային հեռուստատեսության զարգացման միտումները >>
2. Խաչատրյան Սոնա - <<Հետաքննական լրագրության օրենսդրական, վարքականոնային և մասնագիտական հիմնախնդիրները>>
3. Շահնազարյան Սամվել - «Ազգային և համամարդկային արժեքների դրսևորումները հեռուստաեթերում ՀԱԵ գործունեության լուսաբանման օրինակով»

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի թեզերի թեմաները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ դոցենտ Լ. Վ. Գալստյանի հաղորդումը ամենամսյա դասալսումների անցկացման և քննարկման վերաբերյալ: Հոկտեմբեր ամսվա սկզբից կատարվում է դասալսումների արդյունքները, որոնք կամփոփենք կիսամյակի վերջում:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լևոն Վազգենի Գալստյանի հաղորդումը պրակտիկայի կազմակերպման, վերահսկման և անցկացման հարցը:

Պրակտիկայի ընթացքում ղեկավարները պետք է պարբերաբար հանդիպեն ուսանողների հետ, լինեն հետևողական:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ. դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

2020 թ. նոյեմբերի 11-ին, տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի երրորդ նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:
2.Ուսումնական պրակտիկայի ընթացքի և կազմակերպման քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

. Ամբիոնի վարիչ, դոցենտ Լևոն Գալստյանի հաղորդումը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Սապրակի «Հեռուստատեսությունը և մենք» (ռուսերեն թարգմանությունը՝ Սերգո Սարգսի Երիցյանի, 280 էջ) աշխատությունը լրագրության բաժնի ուսանողների համար որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ հաստատելու մասին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ. դոցենտի պ., Լ.Վ. Գալստյանի հաղորդումը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում վերաբերյալ:

**Լրագրություն 4-րդ կուրս**

**Ավարտական աշխատանքների թեմաներ**

16. Անի Հարությունյան – Գյուղական միջավայրի կերպավորման և տիպականացման միտումները ԶԼՄ-ներում ( Հայաստանի հեռուստատեսային և համացանցային լրագրության օրինակով)
17. Անի Կիրակոսյան –Ռազմական դրության պահանջները և պատերազմական իրավիճակների լուսաբանման առանձնահատկությունները ՀՀ ԶԼՄ-ներում
18. Ալվարդ Դավթյան- Գովազդի և PR-ի ժամանակակից դրսևորումները Հայաստանի էլեկտրոնային լրատվամիջոցներում
19. Աննա Ղազարյան- Լրագրողական գործունեությունը հայ-ադրբեջանական երկրորդ պատերազմի ընթացքում
20. Աննա Դեհնյան- Հետաքննական լրագրության դրսևորումները Հայաստանի ԶԼՄ-ներում

21. Արման Թարվերդյան - Հայկական պարարվեստը հայաստանյան հեռուստաեթերում (ժողովրդական պարերի օրինակով)
22. Սոնա Սարգսյան - Հայաստանի հեռուստալրագրության զարգացման միտումները և ժամանակակից լրագրողական վարքականոնների կիրառումը
23. Վարդուհի Վարդանյան – Երկխոսական ժանրերի զարգացման ժամանակակից միտումները  Հայաստանի հեռուստաեթերում (հարցազրույցի,  զրույցի, բանավեճի, թոք-շոուի օրինակով)
24. Մերի Թաթոյան - Զբոսաշրջային հաղորդումների առանձնահատկությունները ԶԼՄ-ներում (Հայաստանյան հեռուստատեսային և համացանցային լրագրության օրինակով)
25. Մարիամ Մանուկյան- Ճամփորդական ակնարկը Հայաստանի ժամանակակից հեռուստաեթերում և նրա դրսևորումները
26. Ինեսսա Անդրեասյան - ԶԼՄ-ների գործառույթների կիրառումը Հայաստանի հեռուստաեթերում՝  հասարակական-քաղաքական հաղորդաշարերի օրինակով
27. Գրետա Մնացականյան - Լրագրողական վարքականոնները և հարցազրուցային հաղորդումները Հայաստանի  հեռուստաընկերությունների եթերում (հարցազրույցի, զրույցի, ճեպազրույցի, բանավեճի, թոք-շոուի տեսքով)
28. Մայա Չուխաջյան - Զբոսաշրջության թեման Հայաստանի հեռուստաեթերում, համացանցում և դրա ներկայացման առանձնահատկությունները
29. Քնարիկ Մխիթարյան – Կրոնական և հոգևոր հաղորդումները Հայաստանի հեռուստաընկերությունների ժամանակակից եթերում (մշակույթի, ավանդույթների և ծիսակատարությունների մասին հաղորդումների օրինակով)
30. Լիաննա Մելիքսեթյան – Հայաստանի  ԶԼՄ-ները և լրագրողական աշխատանքը համաճարակի օրերին:

**Լրագրություն 2-րդ կուրս**

**Մագիստրոսական թեզերի թեմաներ**

4. Լազարյան Սյուզաննա  -  <<Ավանդական եւ համացանցային հեռուստատեսության զարգացման միտումները >>
5. Խաչատրյան Սոնա  -  <<Հետաքննական լրագրության օրենսդրական, վարքականոնային և մասնագիտական հիմնախնդիրները>>
6. Շահնազարյան Սամվել - «Ազգային և համամարդկային արժեքների դրսևորումները հեռուստաեթերում ՀԱԵ գործունեության լուսաբանման օրինակով»

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի թեզերի թեմաները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ. դոցենտի պ., Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի կազմաերպման վերաբերյալ£

Համաձայն ուսումնական պլանի հեռուստառադիոլրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկան սկսվում է հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ: Բայց համաճարակի պատճառով խնդրում ենք *Լրագրություն* մասնագիտության 4-րդ կուրսի ներքոնշյալ ուսանողների 1-ին կիսամյակի ուսումնական պրակտիկան կազմակերպել ***2020թ. նոյեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 11-ը*** (4 շաբաթ) ՀՊՄՀ ռեկտորի 03.04.2020թ. 1096-Լ հրամանով սահմանված կարգով ***հնարավորության դեպքում*** դրանք կազմակերպել առցանց, նաև ***Լրագրություն*** մասնագիտության 2-րդ կուրսի ներքոնշյալ ուսանողների 1-ին կիսամյակի մասնագիտական պրակտիկան կազմակերպել ***2020թ. նոյեմբերի 13-ից մինչև դեկպեմբերի 4-ը*** (3 շաբաթ):

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Համաճարակի պատճառով պրակտիկան կազմակերպվելու է հեռավար:

Ընթացիկ հարցեր

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտ Լևոն Գալստյանի հաղորդումը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Սապպակի «Հեռուստատեսությունը և մենք» (ռուսերեն թարգմանությունը՝ Սերգո Սարգսի Երիցյանի, 280 էջ) աշխատությունը լրագրության բաժնի ուսանողների համար որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Բ.գ.թ Արտաշես Մարիտիրոսյանը ներկայացրեց աշխատության համառոտ բովանդակությունը՝ կարևորելով դրա կիրառական նշանակությունն ապագա լրագրողների համար:

Մ.գ.թ. դոցենտ Արթուր Բաղդասարյանը բարձր գնահատեց այն հանգամանքը, որ աշխատության տեսական դրույթները հիմնավորված են առատ փաստական հիմքերով և օրինակներով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Միջնորդել Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդին՝ վերոնշյալ գիրքը հաստատել որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ լրագրության բաժնի ուսանողների համար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի

վարիչի պ. դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

2020թ. դեկտեմբերի 15-ին, տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի չորրորդ նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Աշխատանքային և ուսանողական կարգապահության հարցը:
2. Պրակտիկայի ամփոփում:
3.1-ին կիսամյակի սեսիոն քննությունների նախապատրաստում, քննական տոմսերի քննարկում և հաստատում:
4.Տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:
3.Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը աշխատանքային և ուսանողական կարգապահության հարցի վերաբերյալ:

Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսանողների և դասախոսների կարգապահության հարցին: Դասախոսները պետք է ժամանակին կատարեն իրենց պարտականությունները: Ուսանողներին խստիվ արգելել դասաժամերին բջջայիններից օգտվելը, ֆակուլտետի շենքում ծխելը: Անհրաժեշտ է խնամքով վերաբերվել լսարանում տեղադրված գույքին, տեխնիկային, մաքուր պահել լսարանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի ամփոփման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի դասախոս Գայանե Պողոսյանը.

2020թվականի նոյեմբերի 13-ից դեկտեմբերի 11-ը ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության ամբիոնի լրագրություն բաժնի 4-րդ կուրսի 15 ուսանողներ իրենց ուսումնական պրակտիկան անցկացրեցին առցանց ձևաչափով, ինչպես մյուս առարկաները: Պայմանավորված պատերազմական դրությամբ և կորոնավիրուսի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակով,

նախընտրելի համարվեց հեռավար ուսուցման ձևաչափը: Պարապմունքները տեղի են ունեցել շաբաթը երկու անգամ, ուսանողներին տրվել են առաջադրանքներ, դրանք քննարկվել են դասաժամերին:

Ուսանողները նախորդ պրակտիկայի ընթացքում արդեն հնարավորություն էին ունեցել գործնականում ծանոթանալու հեռուստա-ընկերությունների, ռադիոյի, մամուլի աշխատանքի առանձնահատ-կություններին, մասնակցել էին ասուլիսների, հարցազրույցների, պատրաստել էին ինքնուրույն հաղորդումներ: Ունեցած փորձը, ինչպես նաև դասաժամերին ծավալված քննարկումներն օգնեցին պատվով հաղթահարել իրավիճակով պայմանավորված դժվարությունները և ներկայացնել թեմատիկ և ժանրային լայն ընդգրկմամբ հաղորդումներ:

Պրակտիկայի ամփոփման արդյունքում ուսանողների մասնակցությունը և ակտիվությունը գնահատվել են հետևյալ միավորներով՝

1.Դավթյան Ալվարդ - 100
2.Դեհնյան Աննա - 90
3.Թաթոյան Մերի - 100
4.Թարվերդյան Արման - 85
5.Ղազարյան Աննա - 100
6. Կիրակոսյան Անի - 100
7.Հարությունյան Անի - 100
8.Մանուկյան Մարիամ - 85
9.Մելիքսեթյան Լիաննա - 90
10.Մխիթարյան Քնարիկ - 95
11.Մնացականյան Գրետա - 90
12.Չուխաջյան Մայա - 90
13. Սարգսյան Սոնա - 100
14.Վարդանյան Վարդուհի - 100
15.Անդրեասյան Ինեսսա - 95

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ս.Երիցյանը.

2020 թվականի նոյեմբերի 13-ից դեկտեմբերի 4-ը (3 շաբաթ) ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության ամբիոնի լրագրություն բաժնի 2-րդ կուրսի 3 ուսանողները իրենց մասնագիտական պրակտիկան անց են կացրել առցանց ձևաչափով: Արտակարգ իրավիճակից ելնելով, նախընտրելի համարվեց հեռավար ուսուցման ձևաչափը: Պարապմունքները տեղի են ունեցել շաբաթը երկու անգամ, ուսանողներին տրվել են առաջադրանքներ, դրանք քննարկվել են պրակտիկայի ժամերին: Հանդիպել և քննարկվել են թեզերի պրակտիկ մասերի, թե դրանք ինչպես են դրսևորվում այսօրվա ԶԼՄ-ներում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Արդյունքները համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ. դոցենտի պ., Լ.Վ. Գալստյանի հաղորդումը 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների նախապատրաստման, քննական տոմսերի քննարկման և հաստատման վերաբերյալ:

Դեկտեմբեր ամսին անհատական ժամերին զուգահեռ անց են կացվում ինքնուրույն և արտալսարանային պարապմունքներ: Ստուգարքները և քննությունները անցկացվում են 100 բալանոց գնահատման համակարգով, ստուգարքների գնահատականները նշանակվում են երկու ընթացիկ ստուգումների գնահատականների հիման վրա:

Քննությունները պարտադիր պետք է անցկացվեն քննական տոմսերով և ընթերակայի ներկայությամբ: Ստուգարքները և քննությունները անց են կացվում դեկանատի կողմից կազմած գրաֆիկին համապատասխան:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել քննական հարցաշարերը և տոմսերը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ. դոցենտի պ. Լ.Վ. Գալստյանի հաղորդումը տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման վերաբերյալ:

Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում ամբողջ ծավալով կատարել է ծրագրված ուսումնական աշխատանքները:

Լսարանային դասերն ընթանում են բացառապես առցանց եղանակով: Հավետու շրջանն արդեն կարելի է համարել ինտերակտիվության խորացման և որոշ առումով նաև զարգացման ժամանակատված: Շարունակվեց նոր մեթոդների կիրառում, օրինակ՝ որևէ լեզվառճական երևույթի ամրակայման համար անհիրաժեշտ ինքնուրույն տնային աշխատանքներ կատարելու պահանջը: Ուսանողը դարձել է ոչ միայն գիտելիքներ յուրացնող և հմտություններ ձեռք բերող օբյեկտ, այլև ստեղծարար, դասընթացի նոր ձևաչափեր թելադրող սուբյեկտ, ինչն ավելի արդյունավետ է դարձնում դասընթացները և հնարավորություն տալիս գործնականում հաստատել ուսանողի մասնագիտական վարպետության կատարելագործման շարժընթացը:

Զարմանալիորեն հաշվետու շրջանում չնկատվեցին ակադեմիական անբարեխղճության դրսևորումներ ուսանողների աշխատանքում, և դա շնորհիվ ոչ միայն բացատրական աշխատանքի, այլև գնահատման բաղադրիչների համամասնության ճշգրտման հոգուտ ակնկալվող վերջնարդյունքի:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԺԱՄԵՐ: Առցանց հաղորդակցումը բազմազան բնույթ էր կրում: Հարց ու պատասխանի նոր մեթոդների կիրառմամբ կատարվեցին անցած նյութի յուրացման ստուգումներ:

ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ: Ամիբիոնի վարիչի դասալսումների արդյունքները քննարկվեցին դասախոսների հետ առանձին առցանց հանդիպումներում:

ԿՈՒՐՍԱՅԻՆ, ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ: Իսպառ վերացվեցին արտագրություններն ու հուշումները՝ շնորհիվ թեմաների հստակության ու ճշգրտման: Հաշվի էին առնվում նաև ուսանողների առաջարկները, ինչը մեծացնում էր նրանց պատասխանատվությունը ազնվության ու բարեխղճության հարցերում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ: Հաշվետու շրջանում որոշվեց պարզեցնել պրակտիկան՝ հենվելով ֆակուլտետի ներքին հնարավորությունների վրա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաստատել տարեկան հաշվետվությունը:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի

վարիչի պ. դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

2021 թ. հունվարի 26-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հինգերորդ նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների ամփոփում:
2. Ընթացիկ հարցեր:
   - առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհումներ

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը առաջին կիսամյակի սեսիոն քննությունների ամփոփման վերաբերյալ£

Ստուգարքները գնահատվեցին երկու միջանկյալների հիման վրա: Քննությունները անցկացվեցին 100 բալանոց գնահատման համակարգով: Բոլոր կուրսերի ուսանողները պարտադիր պետք է պատասխանեին տոմսերի հարցերին: Քննական գնահատականները հիմնվել են նաև ուսանողների հաճախումների, ակտիվության և ինքնուրույն աշխատանքների վրա: Քննությունները անց են կացվել ընթերակաների ներկայությամբ: Լ. Գալստյանը գոհունակություն արտահայտեց քննությունների վերաբերյալ, նշեց, որ մասնակցել է որոշ քննություններին և գոհ է արդյունքներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ամբիոնի պրոֆեսոր Հ.Ավետիքյանը, դոցենտներ՝ բ.գ.թ. Ա. Մարտիրոսյանը, մ.գ.թ., Ա. Բաղդասարյանը, ա.գ.թ. Ա. Աբրահամյանը, դասախոսներ Կ. Քոչարյանը, Ա.Ղուկասյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Բավարար գնահատել առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն -Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի կուրսերի մասնագիտական առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների մասին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել էլեկտրոնային ուսուցման Google Classroom-ի հարթակում տեղադրվող դասընթացների, առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ., դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

2021 թ. փետրվարի 5-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի վեցերորդ նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսումնական պրակտիկայի կազմակերպումը «Լրագրություն» բաժնի 3-րդ կուրսում:
2. Ընթացիկ հարցեր
   - դասալսումներ
   - իրազեկման հանդիպում տնօրենների և աշակերտների

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Համաձայն ուսումնական պլանի լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկան սկսվում է փետրվարի 9-ից մինչև մարտի 8-ը ներառյալ: Նախապես գրությամբ դիմել ենք <<ԱՋԳ>> շաբաթաթերթում: Պրակտիկայի ղեկավարն է պրոֆեսորի պ. Հակոբ Ավետիքյանը:

Ընթացիկ հարցեր

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը դասալսումների վերաբերյալ:

Դասալսումները հաստատեցին այն նախնական ենթադրությունս, որ, ի տարբերություն, ստեղծագործական բնույթ ունեցող այլ մասնագիտությունների, «Լրագրություն» մասնագիտության համար որքան էլ անսովոր, նույնքան էլ օգտակար է առցանց շփումը: Այն հնարավորություն է տալիս պարզելու և կատարելագործելու «կենդանի եթերում» աշխատող ապագա հեռուստալրագրողի հմտությունները: Յուրաքանչյուր ուսանողի համար համակուրսեցիները դառնում էին յուրատեսակ կենդանի լսարան, որտեղ կամա թե ակամա պետք է լավագույնս դրսևորես քեզ:

Դասընթացների բովանդակային համապատասխանությունը թեմատիկ տրոհումներին ապահովված էր, քանի որ էլեկտրոնային հարթակը հնարավորություն է տալիս նախապես ծանոթանալու տվյալ թեմային հարակից հարցերին առնչվող տարաբնույթ տեքստային և տեսաձայնային օժանդակ նյութերին, որոնք նախապես տեղադրում են դասախոսները:

Տեխնիկական խնդիրներ առաջանում էին հիմնականում համացանցային կապի խափանումների պատճառով: Այս առումով արժե տեսաձայնագրել և տեղադրել դասընթացները, որպեսզի ուսանողները կապի վերականգնումից հետո ծանոթանան նյութին:

Առցանց հաղորդկցման դաշտից դուրս է մնում, իհարկե, կենդանի շփումը, որն, այնուամենայնիվ, անփոխարինելի է թիմային աշխատանքի արդյունավետության ապահովման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - Դասալսումների արդյունքները համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը տնօրենների և աշակերտների հանդիպման իրազեկման վերաբերյալ:

Կազմվել է ժամանակացույց, ըստ որի ամբիոնի դասախոսները հանդիպումներ կունենան ներքոհիշյալ դպրոցների և վարժարանների դպրոցականների հետ, ներկացվում է ցուցակը որտեղ պետք է անցկացվի ճանաչողական այցելություններ.

| N | Հաստատության անվանումը | Դասախոսի անուն ազգանուն | Ամսաթիվ, օրը |
|---|---|---|---|
| 1. | ք. Երևան N 118 ավագ դպրոց | Բաղդասարյան Արթուր Վանիկի մ.գ.թ., դոցենտ, Ջիրջյան Էլեն Բենիամինի դասախոս | 02.03.2021 թ. |
| 2. | ՀՊՄՀ հենակետային վարժարան | Գալստյան Լևոն Վազգենի ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. | 09.03.2021 թ. |
| 3. | ք. Երևան, N 62 | Քոչարյան Կարինե Գրիգորի դասախոս, Պողոսյան Գայանե | 19.03.2021 թ. |

| | | | |
|---|---|---|---|
| | | Ռուբենի դասախոս | |
| 4. | ք. Երևան, N 84 դպրոց | Օլքինյան Վարուժան Գևորգի դասախոս, Վարդազարյան Գայանե Վլադիմիրի ասիստենտ | 25.03.2021 թ. |

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ., դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

2021 թ. մարտի 25-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

3. Պրակտիկայի ամփոփում:
4. Բակալավրատի կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում /վերջնական/:
5. Մասնագիտական պրակտիկայի կազմակերպում «Լրագրություն» բաժնի 1-ին կուրսում:
6. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի ամփոփման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Հակոբ Ավետիքյանը.

Համաձայն ուսումնական պլանի լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկան սկսվել է փետրվարի 9-ից մինչև մարտի 8-ը ներառյալ (4 շաբաթ): Ուսանողների 9-ը՝ իրենց պրակտիկան անցենկացրել ¦ԱԶԳ§ շաբաթաթերթում:

Ամբողջ մարտ ամիսն ընդգրկած պրակտիկայի ընթացքում, որն անցկացվեց «Ազգ» շաբաթաթերթի եւ azgonline.am լրատվական-վերլուծական հարթակի խմբագրությունում, իմ ղեկավարությամբ, ընդհանուր առմամբ եղավ օգտակար եւ արդյունավետ: Ուսանողները այդ ընթացքում առիթ ունեցան իրենց գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել առավելաբար լրագրողական տեքստերի պատրաստման, համակարգչային գիտելիքների հարստացման, հայերեն տառատեսակների, դրանց չափսերի ու ծրագրերի, ինչպես նաեւ էջադրման ու մանավանդ լուսանկարների մշակման ու տեղադրման գործում: Այդ ընթացքում նրանց հետ պարապեցին մեր խմբագրության հմուտ մասնագետներ Անի Գրիգորյանը եւ Կարինե Արզումանյանը, ինչպես նաեւ նշանավոր երգիծանկարիչ եւ ռեժիսոր Սուքիաս Թորոսյանը (Toto):

Միաժամանակ, ուսանողները առիթ ունեցան հմտություններ ձեռք բերելու լրագրողական նյութեր պատրաստելու, գործնական թեմաներ ընտրելու, փաստացի

տվյալներ հավաքելու, դրանք ընթերցողին մատուցելու, ինչպես նաեւ նյութերը պատրաստելիս անպայման տարբեր խավերի, տարիքի ու մասնագիտության տեր մարդկանց հետ զրուցելու փորձ եւ համարձակություն ձեռք բերելու։

Այդ ընթացքում ուսանողներին հաջողվեց «**Ազգ**» թերթի համար ընդունելի մակարդակով լրագրային նյութեր պատրաստել, որոնց մեծ մասը հրատարակվեց մեր թերթում, փոքրիկ հոնորարներ ապահովելով երիտասարդ լրագրողներին։

Պետք է կարեւորությամբ ընդգծել նաեւ, որ նյութերը պատրաստելուց հետո ուսանողները ծանոթացան դրանց, անհրաժեշտ ուղղումներ եւ սրբագրություններ կատարելով դրանցում՝ «լրագրողը իր նյութի առաջին խմբագիրն է» սկզբունքով։

Այստեղից ծագեց միտք, որ ուսանողները, հատկապես նրանցից չորսը, առաջիկայում կունենան իրենց էջը «**Ազգ**» թերթում՝ «**Նոր անուններ**» կամ նման խորագրի ներքո, խմբագրական ինքնուրույն կազմով։

Կրկնում եմ՝ ընդհանուր առմամբ օգտակար եւ արդյունավետ պրակտիկա անցկացրեցին ուսանողները։

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը բակալավրատի կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման և հաստատման վերաբերյալ:

**Լրագրություն 4-րդ կուրս**
**Ավարտական աշխատանքների թեմաներ**

1. Հարությունյան Անի – Գյուղական միջավայրի կերպավորման և տիպականացման միտումները ԶԼՄ-ներում ( Հայաստանի հեռուստատեսային և համացանցային լրագրության օրինակով)
**Harutyunyan Ani - Trends in the formation and typification of the rural environment in the media (by the example of Armenian television and internet journalism)**
2. Կիրակոսյան Անի –Ռազմական դրության պահանջները և պատերազմական իրավիճակների լուսաբանման առանձնահատկությունները ՀՀ ԶԼՄ-ներում

**Kirakosyan Ani - The Requirements of Martial Law and The Features of the coverage of the military situations in the Media of Republic of Armenia**

3. Դավթյան Ալվարդ - Գովազդի և PR-ի ժամանակակից դրսևորումները Հայաստանի էլեկտրոնային լրատվամիջոցներում

**Davtyan Alvard - Modern manifestations of advertising and PR in Armenian digital media**

4. Ղազարյան Աննա - Լրագրողական գործունեությունը հայ-ադրբեջանական երկրորդ պատերազմի ընթացքում

**Ghazaryan Anna - Journalistic activity during the second Armenian-Azerbaijani war**

5. Դեինյան Աննա - Հետաքննական լրագրության դրսևորումները Հայաստանի ԶԼՄ-ներում

**Deinyan Anna - Manifestations of investigative journalism in the Armenian media**

6. Թարվերդյան Արման - Հայկական պարարվեստը հայաստանյան հեռուստաեթերում

**Tarverdyan Arman - Armenian dance on Armenian television (by the example of national dances)**

7. Սարգսյան Սոնա - Հայաստանի հեռուստալրագրության զարգացման միտումները և ժամանակակից լրագրողական վարքականոնների կիրառումը

**Sargsyan Sona - Armenian TV Journalism Development Tendencies and The Application of Modern Journalistic Code/ethics**

8. Վարդանյան Վարդուհի - Երկխոսական ժանրերի զարգացման ժամանակակից միտումները Հայաստանի հեռուստաեթերում (հարցազրույցի, զրույցի, բանավեճի, թոք-շոուի օրինակով)

**Vardanyan Varduhi – Modern tendencies in the development of dialogue genres on Armenian television (by the example of interview,talk, debate, talk-show)**

9. Թաթոյան Մերի - Զբոսաշրջային հաղորդումների առանձնահատկությունները ԶԼՄ-ներում (Հայաստանյան հեռուստատեսային և համացանցային լրագրության օրինակով)

**Tatoyan Mery - Characteristics Features of tourism programs in the media (by the example of Armenian TV and Internet Journalism)**

10. Մանուկյան Մարիամ - Ճամփորդական ակնարկը Հայաստանի ժամանակակից հեռուստաեթերում և նրա դրսևորումները

**Manukyan Mariam - A travel review on modern Armenian television and its manifestations|**

11. Անդեասյան Ինեսսա - ԶԼՄ-ների գործառույթների կիրառումը Հայաստանի հեռուստաեթերում՝ հասարակական-քաղաքական հաղորդաշարերի օրինակով

**Andreasyan Inessa - The Application of Media Functions on Armenian Television by the example of Social-political programs**

12. Մնացականյան Գրետա - Լրագրողական վարքականոնները և հարցազրուցային հաղորդումները Հայաստանի հեռուստաընկերությունների եթերում (հարցազրույցի, զրույցի, ճեպազրույցի, բանավեճի, թոք-շոուի տեսքով)

**Mnacakanyan Greta - Journalistic Code of Conduct and Interview programs on Armenian TV channels (in the form of an interview, a conversation, a briefing, a debate, a talk show)**

13. Չուխաջյան Մայա - Զբոսաշրջության թեման Հայաստանի հեռուստաեթերում, համացանցում և դրա ներկայացման առանձնահատկությունները

**Chukhadjyan Maya - The topic of tourism on Armenian television and on the Internet, the peculiarities of its presentation**

14. Մխիթարյան Քնարիկ – Կրոնական և հոգևոր հաղորդումները Հայաստանի հեռուստաընկերությունների ժամանակակից եթերում (մշակույթի, ավանդույթների և ծիսակատարությունների մասին հաղորդումների օրինակով)

**Mkhitaryan Qnarik – Religious programs on the modern Armenian TV channels (by the example of Culture, tradition and rituals' proagrams)**

15. Մելիքսեթյան Լիաննա – Հայաստանի ԶԼՄ-ները և լրագրողական աշխատանքը համաճարակի օրերին:

**Meliqsetyan Lianna - Armenian media and journalistic work in the days of the epidemic**

Լրագրություն 2-րդ կուրս մագիստրատուրա

Մագիստրոսական թեզերի թեմաներ

**7.** Լազարյան Սյուզաննա - «Ավանդական եւ համացանցային հեռուստատեսության զարգացման միտումները »

Lazaryan Syuzanna -*Development Trends of Traditional and Internet Television*

**8.** Խաչատրյան Սոնա - *«Հետաքննական լրագրության օրենսդրական, վարքականոնային և մասնագիտական հիմնախնդիրները»*

Khachatryan Sona - *The legal, code of conduct and professional issues of investigative journalism*

*9.* Շահնազարյան Սամվել - *«Ազգային և համամարդկային արժեքների դրսևորումները հեռուստաեթերում ՀԱԵ գործունեության լուսաբանման օրինակով»*

Shahnazaryan Samvel - Manifestations of National and Universal Values on TV by Example of Coverage of the Activities of the Armenian Apostolic Church

Ո Ր Ո Շ Ց Ի Ն - Հաստատել բակալավրատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզի թեմաները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ:

Ամբիոնի վարիչ դոցենտ Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողները մասնագիտական պրակտիկան անց են կացնելու Ռադիո Ֆամայում ս/թ ապրիլի 5-ից ապրիլի 23-ը ներառյալ (3 շաբաթ): Պրակտիկայի ղեկավար է նշանակվել՝ մ.գ.թ., դոցենտ Արթուր Բաղդասարյանը:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ., դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

2021 թ. ապրիլի 27-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Պետական քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:
2. Պրակտիկայի ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ. դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պետական քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

Ծանոթանալով սեղմագրերին և լսելով ուսանողներին՝ հանձնաժողովը անդրադարձավ յուրաքանչյուր աշխատանքին, մատնանշելով թերությունները և թերացումները, առաջարկեց մինչև պաշտպանությունը ընկած ժամանակահատվածում շտկել և խմբագրել աշխատանքները՝ հաշվի առնելով արված դիտողությունները և առաջարկությունները: Պաշտպանության թույլտվություն ստացան բոլոր ուսանողները: Ըստ ձևաչափի մագիստրոսական թեզերը մինչև պաշտպանությունը առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ներկայացվեն գրախոսության:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Պաշտպանության թույլտվություն տալ բոլոր ուսանողներին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի ամփոփման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դոցենտ մ.գ.թ., Ա.Բաղդասարյանը.

Համաձայն ուսումնական պլանի լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսումնական պրակտիկան սկսվել է ապրիլի 5-ից մինչև ապրիլի 23-ը

ներառյալ (3 շաբաթ): Ուսանողների 3-ը՝ իրենց պրակտիկան անցենկացրել ¦ՌադիոՖամայում§:

Նրանք ուսումնասիրել են ռադիոյի կառուցվածքը, հետազոտել են ինտերնետային հեռարձակողների և կայքերի լրագրողական նորմերը: Ուսանողները փորձել են պարզել ռադիոհաղորդում պատրաստելու մեխանիզմները, դժվարությունները սկզբունքները: Ուսանողները հիմնականում կարողացել են ընդհանուր պատկերացում կազմել գործնական նպատակով ձևակերպված առաջադրանքների մասին և փորձել են ինքնուրույն քայլեր ձեռնարկել: Պրակտիկայի ընթացքը և ուսանողների պատրաստակամությունն ու հաճախելիությունը գնահատում եմ բավարար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ., դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

2021 թ. մայիսի 25-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Պետական քննությունների արդյունքների ամփոփում:

2. 2-րդ կիսամյակի քննական տոմսերի քննարկում և հաստատում:

2.Դասախոսների և ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ., Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պետական քննությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ:

2021թ. մայիսի 11-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի Լրագրություն մասնագիտության լրագրության բակալավրի մասնագիտացման խմբի 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել է 15 շրջանավարտ:

Քննության բնականոն ընթացքի համար ստեղծված էին անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, լսարանը հագեցած էր պահանջվող տեխնիկական սարքավորումներով: Քննական հանձնաժողովն աշխատեց հանգիստ մթնոլորտում՝ հնարավորություն ունենալով համարժեքորեն գնահատելու ուսանողների գիտելիքներն ու հմտությունները: Ամփոփիչ ատեստավորման աշխատանքները հիմնականում գրված էին պատշաճ մակարդակով, սահմանված չափորոշիչներին համապատասխան:

Գոհացուցիչ էին նաև բանավոր պատասխանները. ուսանողները լավ էին տիրապետում նյութին, կարողանում էին հակիրճ և ամփոփ ներկայացնել իրենց կատարած ուսումնասիրության արդյունքները: Գրավոր աշխատանքից և բանավոր խոսքից զատ քննական հանձնաժողովը ուսանողների ստացած մասնագիտական գիտելիքների մասին կարծիք էր կազմում նաև ներկայացվող տեսանյութերով: Առավել ուշագրավ էին Անի Հարությունյանի, Վարդուհի Վարդանյանի, Մերի Թաթոյանի, Անի Կիրակոսյանի, Մարիամ Մանուկյանի, Ալվարդ Դավթյանի, Գրետա Մնացականյանի, Մայա Չուխաջյանի ավարտական աշխատանքները: Ուսանողներն օգտվել էին մասնագիտական գրականությունից, կատարել համապատասխան հղումներ:

1. Անդրեասյան Ինեսսա Արմենի - 95.17 /գերազանց/
2. Դավթյան Ալվարդ Համայակի - 95.17 /գերազանց/
3. Դեինյան Աննա Արմանի - 90.67 /գերազանց/
4. Թաթոյան Մերի Արթուրի - 98.50 /գերազանց/
5. Թարվերդյան Արման Արայի - 90.67 /գերազանց/
6. Կիրակոսյան Անի Արշակի - 96.67 /գերազանց/
7. Հարությունյան Անի Կարենի - 99.00 /գերազանց/
8. Ղազարյան Աննա Ռոստանիկի - 94.00 /գերազանց/
9. Մանուկյան Մարիամ Արտավազդի - 94.67 /գերազանց/
10. Մելիքսեթյան Լիաննա Արմենի - 91.33 /գերազանց/
11. Մխիթարյան Քնարիկ Արտյոմի - 93.00 /գերազանց/
12. Մնացականյան Գրետա Ավետիքի - 96.33 /գերազանց/
13. Չուխաջյան Մայա Վազգենի - 96.33 /գերազանց/
14. Սարգսյան Սոնա Արայի - 95.67 /գերազանց/
15. Վարդանյան Վարդուհի Մանասի - 99.33 /գերազանց/

2021թ. մայիսի 11-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի Լրագրություն մասնագիտության լրագրության մագիստրոսի մասնագիտացման խմբի 2020-2021 ուստարվա մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցել է 2 շրջանավարտ:

Քննության բնականոն ընթացքի համար ստեղծված էին անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, լսարանը հագեցած էր պահանջվող տեխնիկական սարքավորումներով: Քննական հանձնաժողովն աշխատեց հանգիստ մթնոլորտում՝ հնարավորություն ունենալով համարժեքորեն գնահատելու ուսանողների գիտելիքներն ու հմտությունները:

Մագիստրոսական թեզերը գրված էին պատշաճ մակարդակով: Ուսանողները դրսևորել էին գիտական աշխատանք կատարելու հմտություններ, օգտվել մասնագիտական գրականությունից՝ կատարելով

հղումներ, արել էին գրագետ եզրահանգումներ և առաջարկություններ: Կատարված աշխատանքի մասին պատկերացումն ամբողջական էր դառնում բանավոր պատասխաններին կից ցուցադրվող սլայդների շնորհիվ: Մագիստրոսական թեզերը լիովին համապատասխանում էին սահմանված չափորոշիչներին և բացահայտում էին ուսանողների հետազոտական, վերլուծական, ստեղծագործական աշխատանք կատարելու հմտությունները:

1. Լազարյան Սյուզաննա Գրիգորի – 98.50 /գերազանց/
2. Խաչատրյան Սոնա Հայկազի - 99.50 /գերազանց/

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2-րդ կիսամյակի սեսիոն քննական տոմսերի քննարկման և հաստատման վերաբերյալ: Քննությունները պարտադիր պետք է անցկացվեն քննական տոմսերով և ընթերակայի ներկայությամբ: Ստուգարքները և քննությունները անց են կացվում դեկանատի կողմից կազմած գրաֆիկին համապատասխան:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել 2-րդ կիսամյակի քննական հարցաշարերը:

Լ Ս Ե Ց Ի Ն -Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ., Լ. Վ. Գալստյանի հաղորդումը դասախոսների և ուսանողների մասնակցությունը գիտաժողովների վերաբերյալ:

Քննարկման փուլում են ամբիոնի մասնակցության հնարավորությունները միջազգային հարթակներում: Նախատեսվում է համագործակցել միջազգային կառույցների հետ՝ մասնավորապես մեդիագրագիտության և մուլտիմեդիոն լրագրության հարցերի ուղղությամբ:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ., դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N10

2021 թ. հունիսի 16-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

7. Պրոֆեսորադասախոսական կազմի վերջին հինգ տարիների ստեղծագործական,գիտամեթոդական աշխատանքերի քննարկում:
8. Ընթացիկ հարցեր:
   - Կարծիք

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ դոցենտ Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրոֆեսորա-դասախոսական կազմի վերջին հինգ տարիների ստեղծագործական, գիտամեթոդական աշխատանքերի քննարկման վերաբերյալ:

Ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը մասնակցել է ՀՊՄՀ-ում անցկացված «Հայաստանը 1945-1965 թթ.» խորագրով գիտաժողովին: Գիտաժողովի զեկուցումների ժողովածուում տեղ է գտել նրա «Հայկական հեռուստատեսության մշակութաստեղծ բնույթը (1956-1965)» հոդվածը (Գալստյան Լևոն, Կազմավորման տարիներին Հայկական հեռուստատեսության մշակութաստեղծ բնույթը (1956-1965), «Հայաստանը 1945-1965 թթ.» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ԵՊՄՀ, էջ 141-159):

Լույս է տեսել նաև հայտնի հեռուստատեսաբան Վլադիմիր Սապպակի <<Հեռուստատեսությունը և մենք>> աշխատությունը՝ ամբիոնի դասախոս Սերգո Երիցյանի թարգմանությամբ:

**Հոդվածներ**

1. Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի բ.գ.թ., դոցենտ ,,Բառիմաստային դաշտ՚ հասկացության ըմբռնման հարցի շուրջ,, Ռուսագիտության արդի հիմնախնդիրներ (филиал МГУ имени М.Ломоносова в г. Ереване) N7 (11), 173-191,Երևան 2021 8 էջ
2. Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի բ.գ.թ., դոցենտ

՝Անձ, մարդ՝ բառաիմաստային ենթաբազմության բառարանագրական մշակումները հայերենում, (տպագրության փուլում), ՀՊՄՀ Արդի բառարանագրության հիմնախնդիրները միջազգային գիտական կոնֆերանս, Երևան 2021 15 էջ

3. Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի բ.գ.թ., դոցենտ
՝Անձ, մարդ՝ բառաիմաստային ենթաբազմության մի քանի բառույթների իմաստային զարգացման բառարանագրական վկայություններ, Մ.Մաշտոցի հոբելյանին նվիրված հանրապետական գիտաժողով, (ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետ), Երևան 2021 14 էջ
4. Առաքելյան Արսեն Ռուբենի ա.գ.թ., դոցենտ Ճապոնական կինոյի հազարաթև կռունկը, Вестник Российское-Армянского университета (гуманитарные и общественные наыки), N3 Երևան 2021 11 էջ
5. Գալստյան Լևոն Վազգենի, դոցենիտ պ. Կազմավորման տարիներին Հայկական հեռուստատեսության մշակութաստեղծ բնույթը (1956-1965), «Հայաստանը 1945-1965 թթ․» գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ԵՊՄՀ, էջ 141-159
6. Առաքելյան Արսեն Ռուբենի ա.գ.թ., դոցենտ
ПСИХОЛОГИЧЕСКОЕ ВЗАИМОПРОНИКНОВЕНИЕ ВИРТУАЛЬНОГО МИРА И МИРА РЕАЛЬНОГО ПРИ ВОСПРИЯТИИ ИСКУССТВА ЗРИТЕЛЕМ С ОГРАНИЧЕННЫМИ ВОЗМОЖНОСТЯМИ, Журнал УЧЕНЫЕ ЗАПИСКИ Электронный научный журнал Курского государственного университета. http://scientific-notes.ru/?fbclid=IwAR36ftV6d7HQyi7bY4fC3cQcir-BebxMC6gzT84Qj3Q4w9oiFT0_r-hctbM#new-number , N3, Курск 2021
7. Մարկոսյան Դիանա Հովիկի հ.գ.թ., - Psychological Preparedness of Journalists Covering Emergencies and the Aspects of its Socio-Psychological Impact on Society. Main Issues Of Pedagogy And Psychology, Khachatur Abovian Armenian State Pedagogical University MAIN ISSUES OF PEDAGOGY AND PSYCHOLOGYScientific Periodical, N1 Երևան 2021, https://doi.org/10.24234/miopap.v19i1.389 8 էջ

Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ., Լևոն Գալստյանի հաղորդումը Մերի Ռաֆիկի Թաղևոսյանի «Ժամանակակից տեղեկատվական հոսքերը Հայաստանի ԶԼՄ-ներում. մեդիատիրույթի վերափոխման

առանձնահատկությունները» ատենախոսության մասին և Ժ.01.06. «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու հարցը:

Ատենախոսության թեման արդիական է նախ և առաջ այն պարզ իրողությամբ, որ ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում անընդհատ աճում է զանվածային լրատվամիջոցների դերը: Դրանք դառնում են հասարակական կարծիքի վրա ազդեցության ազդեցիկ գործիքներ: Այս իսկ պատճառով զանգվածային լրատվամիջոցների և դրանց հնարավորությունների ազդեցությունը շատ սոցիալ-քաղաքական երևույթների և գործընթացների նկատմամբ շարունակում է հրատապ մնալ հումանիտար գիտությունների, այդ թվում և լրագրության համար:

Միաժամանակ պետք է նկատել, որ չնայած հաղորդակցության ասպարեզում նոր տեխնոլոգիաների և հնարավորությունների կիրառումը առանձին դեպքերում բերել է «մամուլ, ռադիո, հեռուստատեսություն» ավանդական շղթայի փոխարինմանը նորովի՝ «ալիք, կոնտենտ, հարթակ»: Այս ամենի արդյունքում ավանդական լրատվամիջոցները նոր տեղակատվական համակարգի զարգացմանը զուգընթաց վերկառուցում են իրենց գործունեությանը և նոր իրականությանը հարմարվում են իրենց գործառութային, ժանրաձևաչափային և թեմատիկ հնարավորություններով:

Հեղինակը ոչ միայն այս և նման իրողություններն է ներկայացնում և վերլուծում այլև առանձնացնում է տեղեկատվական հոսքի առկայությունը և աճը, սահմանում ժամանակակից տեղեկատվական հոսքի բովանդակությունը և չափորոշիչները՝ Հայաստանի տեղեկակատվական դաշտի նկարագրի և վերլուծության օրինակով: Ներկայացվող այս և նման հիմնախնդրային ուղղությունները բարձրացնում են քննարկվող աշխատանքի հրատապությունը, կարևորությունը և տեսա-պրակտիկությունը:

Այս ամենից էլ ելնելով հեղինակը հստակ ներկայացնում է ատենախոսության նպատակները, որը թույլ է տալիս հեղինակին ուսումնասիրությունը ավելի կուռ ու ամբողջական դարձնելու:

Մասնավորապես, հեղինակը ուսումնասիրության առարկա է դարձնում տեղեկատվական հոսքերի ժամանակակից առանձնահատկությունները և դրսևորումները դրանց ձևավորման ու զարգացման օրինաչափությունները: Եվ բնական է, որ հետագա շարադրանքում հեղինակը ուսումնասիրում և սահմանում է հիմնական հասկացությունները՝ բովանդակային կապեր գտնելով դրանց միջև՝ չմոռանալով հարակից գործընթացների ու երևույթների մասին, երբ աշխարհայնացումը լուրջ ազդեցություն թողնում լրատվամիջոցների նկատմամբ, իսկ նոր տեղեկատվական համակարգերի մարտահրավերները անգամ լրագրության ասպարեզում ժանրաձևաչափային փոփոխություններ են բերում:

Փոփոխության է ենթարկվում և լրագրողի մասնագիտությունը և նրա մասնագիտական կարողությունները նոր տեղեկատվական հոսքերի դրսևորման և իրականության պայմաններում: Բնական է նաև, որ ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և կիրական նշանակություն, ներկայացնում են նաև գիտական նորույթներ: Մասնավորապես, մեր երկրում առաջին անգամ հեղինակը դիտարկում է տեղեկատվական նոր հոսք հասկացությունը և դրա ձևավորման ու կայացման տեսապրակտիկ մոտեցումները, տեղեկատվական հոսքի բաղկացուցիչ հասկացությունները, դրանց փոխկապակցվածությունը:

Իրավացիորեն հեղինակը վեր է լուծում նաև տեղեկատվական հոսքերի վարքագիծը նաև աշխարհաքաղաքական ազեցությունների հաշվառմամբ, իհարկե, առանցքում ունենալով Հայաստանի մեդիադաշտի առանձնահատկությունները: Այս ամենը վկայում է, որ ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական ու կիրառական նշանակություն և հնարավորություն են տալիս մեդիադաշտի ամբողջական ընկալման ու վերլուծության համար: Այս ամենը հնարավոր է դարձնում բովանդակության, խոր վերլուծությունների և այդ ամենը ներկայացնող ամբողջական շարադրանքի և կուռ փոխկապակց-վածության համար՝ ներծականից սկսած ավարտած եզրակացությունով, կոնկրետ ու հասցեական առաջարկություններով:

Ատենախոսության առաջին գլխում («Տեղեկատվական հոսքերը և դրանց զարգացման միտումները») մշակում է իր ատենախոսության հասկացությունների համակարգը՝ այդ ամենը հիմնավորելով

հայաստանյան իրականությամբ ու միջազգային փորձով, ինչպես նաև մեդիատարածության զարգացման առանձնահատկություններով։ Իսկ երկրորդ գլխում («Ժամանակակից մեդիատիրույթի և տեղեկատվական հոսքերի համակարգի փոխակերպումը տեղեկատվական և տեխնոգիական առաջընթացի դարաշրջանում») ոչ միայն դիտարկվում է մեդիահոսքերի զարգացման առանձնակատկությունները, այլև լսարանի վերաբերմունքի դրսևորման ու վարքագծի գումարելիները, ժանրաձևաչափային փոփոխությունները, տեղեկատվական լիարժեք հոսքի կազմավորման գործում լրագրողի դերակատարությունը և մասնագիտական և վարքականոնային հնարավորությունների ճիշտ և թիրախային օգտագործումը։

Եզրակացություն

Հեղինակի եզրակացությունները ևս հիմնված են հարուստ հետազոտական հենքի վրա և կարող են օգտակար լինել ինչպես տեսաբանների, այնպես էլ պրակտիկների համար։

Այս ամենով հանդերձ ներկայացված աշխատանքը ավելի շահեկան կլիներ, եթե 1.Ատենախոսության առանձին հատվածներում հեղինակը խուսափեր երկարաշունչ նախադասություններից ու ավելի թիրախային լիներ ասելիքը (տես՝էջ 26, 84, 141,145,161)

2.Շարադրանքի տարբեր հատվածներում չչարաշահեր համարակալումները, որը երբեմն ավելորդ շեշտադրումներ է առաջացնում և ընկալման դժվարություններ (տես՝ օրինակ.էջ 82-84, 85-91, 93-96,102,13-138)

3.Եզրակացությունում ավելի հստակ ու կուռ լիներ ասելիքը (էջ 127-160) 4.Սոցիոլոգիական հետազոտությունները արտահայտեին մեդիադաշտի նկատմամբ լսարանի ամբողջական ու համապարփակ վերաբերմունքը, չնայած հեղինակը իր հերթին անց է կացրել իր փորձագիտական հարցումը։ ՈՐՈՇԵՑԻՆ - Միջնորդել Արման Ալեքսանդրի Սաֆարյանի «Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ների օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից

թեկնածուկան ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված «Ժուռնալիստիկա» Ժ.01.06 մասնագիտությամբ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Այս ամենով հանդերձ Մերի Ռաֆիկի Թաղևոսյանի «Ժամանակակից տեղեկատվական հոսքերը Հայաստանի ԶՄՆ-ներում. մեդիատիրույթի վերփոխման առանձնահատ կություններըը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուկան ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված «Ժուռնալիստիկա» Ժ.01.06 մասնագիտությամբ:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ., դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11

2021 թ. հուլիսի 2-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Սեսիոն քննությունների ամփոփում, զեկ. ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ., Լ.Գալստյան:
2. Ամբիոնի տարեկան հաշվետվության քննարկում. զեկ. ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ., Լ. Գալստյան

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ. դոցենտի պ., Լ. Վ. Գալստյանի հաղորդումը սեսիոն քննությունների ամփոփում վերաբերյալ:

Ստուգարքները գնահատվեցին երկու միջանկյալների և ընթացիկ ստուգման աշխատանքների հիման վրա: Քննությունները անց են կացվել քննական տոսերով, ընթերակաների ներկայությամբ: Քննական գնահատականները հիմնվել են նաև ուսանողների հաճախումների, ակտիվության և ինքնուրույն աշխատանքների վրա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Սեսիոն քննությունների արդյունքները համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչի պ., դոցենտի պ., Լ. Վ. Գալստյանի հաղորդումը ամբիոնի տարեկան հաշվետվության քննարկման վերաբերյալ:

Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում ամբողջ ծավալով կատարել է ծրագրված ուսումնական աշխատանքները:

1-ին կիսամյակի լսարանային դասերն ընթանում են բացառապես առցանց եղանակով: Իսկ 2-րդ կիսամյակից անցել ենք դասերն ամբողջությամբ ընթանում են առկա եղանակով: Անցումը դասավանդման այս ավանդական եղանակին պահանջում էր որոշակի վերաադապտացում, հետևաբար, դասընթացների ժամանակ ամփոփվել են առցանց եղանակով անցած նյութը՝ արդեն ինտերակտիվ շփման միջոցով: Դասընթացի դրական արդյունք է դիտարկվում միայն ուսանողի կողմից թեմայի համարժեք ընբռնումն ու դրա

շուրջ արվող ինքնուրույն դիտարկումը: Հավետու շրջանն արդեն կարելի է համարել ինտերակտիվության խորացման և որոշ առումով նաև զարգացման ժամանակատված: Շարունակվեց նոր մեթոդների կիրառում, օրինակ՝ որևէ լեզվաոճական երևույթի ամրակայման համար անհրաժեշտ ինքնուրույն տնային աշխատանքներ կատարելու պահանջը: Ուսանողը դարձել է ոչ միայն գիտելիքներ յուրացնող և հմտություններ ձեռք բերող օբյեկտ, այլև ստեղծարար, դասընթացի նոր ձևաչափեր թելադրող սուբյեկտ, ինչն ավելի արդյունավետ է դարձնում դասընթացները և հնարավորություն տալիս գործնականում հաստատել ուսանողի մասնագիտական վարպետության կատարելագործման շարժընթացը:

Զարմանալիորեն հաշվետու շրջանում չնկատվեցին ակադեմիական անբարեխղճության դրսևորումներ ուսանողների աշխատանքում, և դա շնորհիվ ոչ միայն բացատրական աշխատանքի, այլև գնահատման բաղադրիչների համամասնության ճշգրտման հոգուտ ակնկալվող վերջնարդյունքի:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԺԱՄԵՐ: Առցանց հաղորդակցումը բազմազան բնույթ էր կրում: Հարց ու պատասխանի նոր մեթոդների կիրառմամբ կատարվեցին անցած նյութի յուրացման ստուգումներ:

ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ: Ամբիոնի վարիչի դասալսումների արդյունքները քննարկվեցին դասախոսների հետ առանձին առցանց հանդիպումներում:

ԿՈՒՐՍԱՅԻՆ, ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ: Իսպառ վերացվեցին արտագրություններն ու հուշումները՝ շնորհիվ թեմաների հստակության ու ճշգրտման: Հաշվի էին առնվում նաև ուսանողների առաջարկները, ինչը մեծացնում էր նրանց պատասխանատվությունը ազնվության ու բարեխղճության հարցերում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ: Հաշվետու շրջանում որոշվեց պարզեցնել պրակտիկան՝ հենվելով ֆակուլտետի ներքին հնարավորությունների վրա:

Լրագրություն դասավանդող մասնագետների հետազոտական աշխատանքն ունի յուրահատկություն: Նրանց մի ստվար մասը գործող լրագրողներ են, և մամուլում հանդես են գալիս առավելապես մեդիա ոլորտին

վերաբերող հոդվածներով, որոնք փոքր-ինչ տարբերվում են ակադեմիական գիտության պահանջներին:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի
վարիչի պ., դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան